ՀՏԴ : 929:73(44)Սարկիսյան+73(44)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-18

«ՊԱՊԻԵ-ՄԱՇԵ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՐԱՖՖԻ ՍԱՐԿԻՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

ՇՈՒՇԱՆԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ*

Լայն ճանաչում և համբավ գտած Ռաֆֆի Սարկիսյանը որոշակի տեղ ու դեր ունի ֆրանսիական արդի արվեստի պատմության մեջ: Սարկիսյանի ստեղծագործական լեզուն թեև մշակվել է եվրոպական դպրոցում, այնուամենայնիվ եվրոպական գեղագիտական մտքի առկայության մեջ նա հաստատապես հանգել է ամենակարևորին՝ ազգային գեղարվեստական ավանդների վերածննդին, ձևամտածողության սեփական ըմբռնումների ձևակերպմանն ու հաստատմանը:

Բանալի բառեր՝ Ռաֆֆի Սարկիսյան, պապիե-մաշե, ազգային թեմաներ, Ղևոնդ Ալիշան, խաչքար, Մարիա Յակոբսեն, նեոլիթյան ժայռապատկերներ:

Ներածություն

Ժամանակակից արվեստի ականավոր ներկայացուցիչներից է քանդակագործ Ռաֆֆի Սարկիսյանը: Արվեստագետը ծնվել է Բեյրութում, ուսանել հայկական ճեմարանում: 1967–1970 թթ. գեղարվեստական կրթություն է ստացել Լիբանանի Գեղարվեստի ակադեմիայի քանդակի բաժնում, ապա՝ 1971–1975 թթ. կատարելագործվել Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային բարձրագույն դպրոցում (École nationale supérieure des beaux-arts de Paris)՝ ավարտելով Սեզարի արվեստանոցը: Վաղ շրջանի ստեղծագործություններում նկատելի դարձան Սարկիսյանի անհատականության մղումները, գեղագիտական նոր ըմբռնումների արձագանքներին հիմնված սեփական հայացքը:

Հիմնական նյութի շարադրանք

Մարդու, գիտակցականի, ենթագիտակցականի, գոյության խորհրդի և հոգևորի համապարփակ բանաձևում է Ռաֆֆի Սարկիս-

* Արվեստագիտության թեկնածու, Ֆրանսիա, zshushan@outlook.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

յանի ստեղծագործությունը: Նրա արվեստը ստեղծագործական ինքնատիպ անհատականության, գաղափարագեղարվեստական հղացումների բազմազանության, հարազատ ժողովրդի պատմության և ներկայի նկատմամբ անհագ հետաքրքրության վկայությունն է: Արվեստագետի խոստովանությամբ ամենամեծ ներշնչանքն իր ժողովրդի պատմական-հոգևոր-բարոյական փորձի ճանաչումն է: Սարկիսյանն իր մեջ ծագումնաբանորեն ունի հայոց անցած ուղու ողջ փիլիսոփայությունը, որը հաստատվում է իր ստեղծագործություններով, արվեստի ու կյանքի մասին խորհրդածություններով, հուշագրություններով: Նրա էության ու նվիրումի կրողը հայրենիքն է, որով ամբողջանում է ինքը: Իր ըմբռնողականությամբ նա ամեն ինչ գիտի Հայաստանի մասին՝ երկրի հեռավոր անցյալից մինչև մեր օրերը և ապագան: Արվեստագետի համար ժամանակի այս ընդգրկունությունն ասես հայեցադաշտ է՝ հայ մարդուն բացահայտելու, ցուցադրելու համար:

Ռաֆֆի Սարկիսյանը թղթախմորին (պապիե-մաշե, pâte à papier) դիմել է 1980-ական թվականներից սկսած («Քաղաքի բանալիները», «Սպասում», «Ոսկե դար», «Ռամզեսից Շամպոլիոն», «Քայլք դեպի անսահմանություն» և այլն)[1]: Թեմատիկ կոմպոզիցիոն այս աշխատանքներում հմտորեն են օգտագործված նյութի ընձեռած հնարավորությունները, ծավալաձևերի քանդակման յուրահատուկ պլաստիկան, մակերեսների մշակման հմուտ տարբերակումները՝ առավել ամբողջացնելով Սարկիսյան արվեստագետի, անհատի ստեղծագործական դեմքը, բոլոր ապրումները՝ անձնականից մինչև տիեզերական:

Ռաֆֆի Սարկիսյանն իր աշխատանքներում հետամուտ է գերագույն մի գաղափարի. ովքե՞ր ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և բարոյական ու հոգևոր ի՞նչ արմատներ ունենք: Օրինակ, Կոմիտասի կերպարով արվեստագետը շոշափում է ազգային ինքնաճանաչման, մարդկային առաքինությունների գիտակցման, ցեղային հպարտության

[1] Վերջիններս՝ շուրջ 40 աշխատանք, 2003 թ. բրոնզե տարբերակների հետ միասին («Փարիզ. աշխարհի մայրաքաղաք», «Քաղաք-ծրար», «Բնապատկեր-ծրար») ցուցադրվել են Փարիզի Փոստատան թանգարանում: Այդ ծրարներն արվեստագետի յուրօրինակ պատգամներն են՝ իրենց մեջ կրելով հանդուրժողականության և ունիվերսալության ուղերձը:

գաղափարները: Ինչպես կոմպոզիցիոն յուրահատուկ մոտեցմամբ առանձնացող, թղթախմորից պատրաստված **«Հայր Կոմիտասի վերջին ճամփորդությունը»** ստեղծագործության մեջ (1987 թ.): Պատկերված դուռն այստեղ Փարիզի Վիլ-Ժուիֆ արվարձանի հիվանդանոցի դուռն է, որտեղ հայ երաժշտության հանճարը գտավ իր վերջին ապաստանը՝ անցկացնելով այնտեղ գրեթե քսան տարի և կնքելով իր մահկանացուն 1935 թվականին: Դուռն այստեղ նաև Կոմիտասի լռության, մեկուսացվածության խորհրդանիշն է: Քանդակագործի մեկնությամբ հանճարը ոչ թե լռում էր, այլ չէր ցանկանում խոսել: Կոմիտասն ինքն էր որոշում՝ խոսե՞լ այցելուի հետ, թե՞ ոչ: Դիտանցքի վրա դեմքերի հակադիր արտահայտությամբ Սարկիսյանը զետեղել է Կոմիտասի և Ռեյմսի տաճարի ժպտացող հրեշտակի (1240 թ.) կերպարները: Արվեստագետի պատկերացմամբ Կոմիտասի աճյունը տեղափոխելիս երգահանին է ընկերակցում Ռեյմս քաղաքի ժպտացող հրեշտակը, որպեսզի հոգին տանի Հայաստան: Ճանապարհի ընթացքում Կոմիտասը հարց է տալիս հրեշտակին. «Դու ինչպե՞ս ես ինձ ճանաչում»: Հրեշտակը պատասխանում է. «Դեբյուսին է ինձ պատմել Ձեր մասին»[2]: Կոմիտասին պատկերող այս և հեղինակի կերտած այլ ստեղծագործություններում նկատում ենք հաճախ կիրառվող հատկանշական տարրեր, սիմվոլներ, որոնք օժանդակում են կերպարի բացահայտմանը՝ կազմելով նրա գեղարվեստական լեզվի անբաժան մասը: Ինչպես օրինակ դռան վրա առկա հավերժության սիմվոլը՝ պսակված բաղեղ բույսի տերևներով: Վերջինս քրիստոնյա միջնադարի խորհրդանիշների շարքում, ինչպես գիտենք, դիտվում էր որպես մահից հետո հոգու հավիտենական կյանքի խորհրդանիշ[3]:

Ռաֆֆի Սարկիսյանը դիմում է ազգային թեմաներին և կերպարներին՝ այն հատուկ և սպառիչ գիտակցությամբ, որ ամեն մի ժողովուրդ իր արմատների, իր պատմության շարունակությունն է: Եվ պատմական հիշողությունը, ազգային խորհրդանշանները նրա գոյա-

---

[2] Տե՛ս **Զոհրաբյան Շ.,** Կոմիտասի կերպարը քանդակագործ Ռաֆֆի Սարկիսյանի արվեստում, «Էջմիածին», 2019, Թ, էջ 142-143:

[3] Տե՛ս Dictionary of Symbolism: Cultural icons and the meanings behind them, by Hans Beidermann, translated by James “Hulbert, Facts on File”, New York, 1992, p. 187:

տևման և հարատևման նախապայմաններն են: Ավեստագետը կիրառում է այն ձևերը, որոնց մեջ դարերով արտահայտվել են ժողովրդի էությունն ու ոգին: Ինչպես հայ ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկը համարվող **«Խաչքար»** ստեղծագործությունը (2022 թ.): Այստեղ խաչի տակ գտնվող սկավառակաձև վարդակը Սարկիսյանը փոխարինել է Նոր Քերթողահոր՝ Ղևոնդ Ալիշանի գլխապատկերով, ով մարտակոչային բնույթի իր բանաստեղծություններով («Ի բամբիռն հայկազնի», «Կարմիրն Վարդան», «Սեպուհն Վասակ», «Ի սուրբ Ղևոնդ», «Դատաստանք Վասակայ Մատնչի», «Ոգին Հայաստանեայց» կամ հայրենասիրական, ազատասիրական տրամադրություններն արտահայտող «Հուշիկք հայրենյաց հայոց» գեղարվեստական արձակը) ոգևորում էր «վասն հայրենեաց» կռվող քաջե-

ին[4]: Սարկիսյանը շեշտադրել է հոգևոր մթնոլորտի անսահման ջերմությունը: Զարդարվեստի մոտիվներն այստեղ արտացոլում են իր կերտողի պատմությունն ու մտածողությունը: Յուրակերպ լուծում են գտել նորն ավանդականին զուգորդելու արվեստագետի գեղագիտական ձգտումները՝ ասես հուշելով, որ հնացած թեմաներ և մոտիվներ չեն լինում, այլ դրանք պայմանավորված են արվեստագետի հայացքի նորության, նյութի զգացողության խորության և ասելիքի մասշտաբներով: Կանոնական սիմվոլները, պահպանված լինելով հանդերձ, ներկայացված են ինքնատիպ ձևակերպումով և ոճավորմամբ: Խաչքարի վերին հատվածում քանդակագործը հատկացրել է հայոց այբուբենի յոթերորդ տառի՝ «Է»-ի բազմակի պատկերմանը՝ կենտրոնում ներկայացված հրեշտակի կերպարով: Ընդհանրապես հայոց գիրը Սարկիսյանի արվեստում ուրույն տեղ է գրավում, որի միջոցով նա ասես փորձում է վերագտնել, հաղորդակցվել կամ մեզ հաղորդակից դարձնել անցյալի գրավոր պատմությանն ու ժառանգությանը[5]: Չէ՞ որ, ինչպես գիտենք, ազգային ինքնության համապատկերում մշակույթի ամենակարևոր ոլորտներից մեկը՝ լեզուն ևս ենթարկվել է ցեղասպանության՝ լեզվասպանության: Այս առումով կարող ենք առանձնացնել **«Թռչնոց բույն»** աշխատանքը (2022 թ.): Սարկիսյանը դարձի ճամփաների մորմոքուն որոնումների թեման գիտի ոչ միայն մանկական հիշողություններից, այլև կարդացած վավերագրերից, գիտական ուսումնասիրություններից, հուշագրություններից ու գեղարվեստական երկերից: Ավելին, արվեստագետի ծնողները ժամանակին Հայոց ցեղասպանության հազարավոր այլ որբուկների հետ հայտնվել էին Լիբանանի «Թռչնոց բույն» որբանոցում: Այստեղ նրանց համար գթառատ մայր է եղել Հայոց եղեռնի սարսափներին ականատես եղած դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը[6], որի անունն արվեստագետը դրոշմել է հիշյալ

---

[4] Տե՛ս **Շտիկյան Ս.,** Ղևոնդ Ալիշան (Ծննդյան 150-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 2, էջ 14, 16:

[5] Տե՛ս **Զոհրաբյան Շ.,** Ռաֆֆի Սարգսյանի արվեստի առանձնահատկությունները, «Վէմ» համահայկական հանդես, 2016, Ը (ԺԴ) տարի, թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 149:

[6] Տե՛ս **Բախչինյան Ա.,** Հայանպաստ շարժումը սկանդինավյան երկրներում (1896-1930-ական թվականներ), «Պատմա-բանասիրական հանդես», 2002, N 3, էջ 62:

ստեղծագործության վերին հատվածում: Կապտավարդագույն գունե-
ռանգներով արված և դռան պատկեր հիշեցնող այս աշխատանքում
տեսնում ենք ծնողներից ու հայրենիքից զրկված և սպասման վիճա-
կում գտնվող երեք որբուկների դիմապատկերներ:



Ռաֆֆի Սարկիսյանի արվեստի ազգային նկարագիրն ար-
տահայտվում է իր ժողովրդի ոգու հստակ, ամրակուռ ձևերի մեջ: Նրա
ստեղծագործություններն աչքի են ընկնում հայի անցյալի, նրա հոգևոր
գեղեցկությունների իմաստավորմամբ և ուրույն մեկնությամբ: Ինչպես
օրինակ, **«Նեոլիթյան ժայռապատկերներ»** (2022 թ.) աշխատանքում
արվեստագետը դիմում է հայ հնագույն քանդակագործությանը և
ժայռապատկերներին, ուսումնասիրում է, ստեղծագործորեն փոխա-
ռում այն, ինչը հաստատվել է ազգային արվեստի գանձարանում՝ որ-
պես նրա հոգևոր արժեքների մի մասը: Հնագույն արվեստի այդ ձևերը
նա չի ոճավորում, այլ մեկնաբանում է յուրովի և դարձնում իր ստեղ-
ծագործական լեզվի անբաժան մասը: Ստեղծագործությունում պատ-

կերված կերպարներն ասես մեզ են նայում դարերի խորքից, որոնցով քանդակագործն ասես կարևորում է հայրենի աշխարհի գաղափարը, ուշադրությունն այն մարդկանց նկատմամբ, որոնք ներկայացնում են այդ աշխարհը: Հիշյալ աշխատանքը համապատասխան արտահայտչություն է ստացել կառուցիկ ծավալի, մակերևույթի որոշակի հակադրության մեջ: Ռաֆֆին հաճախ իր գործերում ստեղծագործաբար շա-

ռունակում և ավարտում է այդ ձևերը, ձգտում է նրանց մեջ գտնել համամասնությունների, գույների և գծերի ներդաշնակություն: Ասվածի վկայությունը **«27 սեպտեմբեր, 2020 թ.»** ստեղծագործությունն է, որի արտահայտչականությունը պայմանավորված է մարդկանց դեմքերի, դիմախաղի, հոգեբանության խոր իմացությամբ, շարժման, գլխի դարձերի, դիմագծերի մեջ ինքնատիպը նուրբ ու ճշգրիտ հաղորդելու կարողությամբ: Կոմպոզիցիայի յուրաքանչյուր մանրամասն, գեղարվեստական լեզուն իրենց մեջ խտացրել են արվեստագետի ըմբռնումները: Ստեղծագործության վերին ձախ հատվածը Սարկիսյանը հատկացրել է ֆրանսիացի հայտնի միկրոկենսաբան, մի քանի պատվաստանյութերի հեղինակ Լուի Պաստյորի կիսադեմ պատկերմանը (ի դեպ, այս տարի լրանում է գիտնականի ծննդյան 200-ամյակը): Նամականիշ հիշեցնող հիշյալ պատկերի կողքի առկա գրությունն ու տարեթիվը հուշում են, որ քանդակագործն այստեղ ասես միավորել է և՛ բռնկված համավարակի, և՛ Արցախյան պատերազմի թեման: Պատկերված մարդիկ օրգանապես կապվում են իրենց շրջապատող և իրենց կյանքը կանխորոշող աշխարհին: Ասես իր կերպարների հայացքներն իր՝ վկայի հայացքն են: Այստեղ Սարկիսյանը հատուկ դիմել է նրբագեղ ու տպավորիչ գծանկարի և պլաստիկ ծավալներ քանդակել: Ցայտուն գծանկարի, եռաչափ կերպարների շնորհիվ այս կերպարներն ասես անջատվում-ելնում են պատկերի շրջանակներից, մոտենում դիտողին: Մարդկային լարված հոգեվիճակն արտահայտվում է արտաքին էքսպրեսիայում՝ սուր ու ազդու ընդգծված դիմագծերի ներդաշնակ հարաբերակցությամբ: Մարդու հոգեվիճակի այս տարատեսակը գեղանկարչորեն մարմնավորելու բազմաթիվ տարբերակները հանգեցրել են մի կերպարի ստեղծման, որն անցնում է մի ստեղծագործությունից մյուսին՝ միանգամայն տարբերվելով նախորդից արտահայտչամիջոցներով և կատարելապես հավատարիմ մնալով տրամադրության պատկերմամբ: Հակադրությունը՝ որպես հնարանք, հիմք է դարձել կոմպոզիցիոն բոլոր գործերի համար: Սրությունն ու արտահայտությունն էլ հենց Սարկիսյանի գեղարվեստական լեզվի հատկանիշներն են, որոնց նա հասնում է՝ շարունակ ընտրելով, մշակելով ու հղկելով իր հնարանքներն ու պատկերավորման միջոցները:

Եզրակացություն

Ռաֆֆի Սարկիսյանի գրեթե բոլոր գործերը նախապատրաստական աշխատանքի փուլ են անցնում գծանկարների ձևով և ժամանակագրական հաջորդականությամբ նշում են իր աշխարհընկալման և ստեղծագործական անհատականության յուրահատկությունները: Այդ գծապատկերներն իրենց ուրույն կառուցվածքով և ավարտվածությամբ դիտողին ներկայանում են իբրև իր մարդկային էության ու հոգեկան ապրումների թարգմանություն:

Արվեստագետը ստեղծում է ամենաբազմազան ֆակտուրաներ, մոտենում է մերթ գունանկարչական փափկության, մերթ՝ քանդակային ցայտուն ձևերի: Տարբեր ֆակտուրաներով մակերեսները, ուռուցիկ և գոգավոր ծավալները, տարածական հարաբերությունների դինամիկան, երանգային հնարանքները նա հիանալի զուգորդում է գրաֆիկ գծի հետ: Սարկիսյանի գրաֆիկայի այս առանձնահատկություններն ի հայտ են եկել դեռ սկզբնական շրջանի նրա աշխատանքներում, որոնց գեղագիտական միտումը կապվում է գծանկարչության և քանդակի սինթեզի միջոցներ որոնելու հետ:

Լայն ճանաչում և համբավ գտած Ռաֆֆի Սարկիսյանը որոշակի տեղ ու դեր ունի ֆրանսիական արդի արվեստի պատմության մեջ[7]: Սարկիսյանը մտքի, հետազոտության և վառ երևակայության արվեստագետ է: Որևէ թեմայի դիմելիս նա ստեղծում է ինքնուրույն արժեք ունեցող բազմաթիվ տարբերակներ՝ յուրաքանչյուրի մեջ մի նոր հնչերանգ գտնելու նպատակով: Հայրենիքի ու նրա պատմության անբաժան մասը լինելու գիտակցությունը կրող արվեստագետն ապրում է մայր երկրի ու նրա հարատևման ոգու խորհուրդը, ապրում դիտողի հետ: Նա իր հոգում ամբարել է նախնիների հիշողությունը, մեր ազգային հատկանիշների թանձրույթը: Եվ այս բոլորն անցնում են ստեղծագործությունից ստեղծագործություն, դառնում հոգեբանություն ու գունային խտացում:

---

[7] Նրա արվեստին են անդրադարձել մի շարք հայտնի արվեստաբաններ՝ լույս ընծայելով տարբեր հոդվածներ հայտնի պարբերականներում, ինչպես՝ Gérard Xuriguera (Raffy Sarkissian, FMR, 1992, du 1ère au 21 avril, № 37, p. 3), Janine Baron (Raffy Sarkissian, L'ŒIL, Revue d'art, 1989, Juin, № 407, p. 17), Klaus Reuter, Joseph Tarrab և այլք:

ПРОИЗВЕДЕНИЯ В ТЕХНИКЕ ПАПЬЕ-МАШЕ В ИСКУССТВЕ РАФФИ САРКИСЯНА

ШУШАНИК ЗОГРАБЯН

Раффи Саркисян пользуется большой популярностью и широким признанием и занимает достойное место в истории современного французского искусства. Творческий стиль Р. Саркисяна оформился в европейской школе, тем не менее в европейском эстетико-художественном мышлении он сумел достичь главного – возрождения национальных художественных традиций, формирования и утверждения своего собственного восприятия.

Ключевые слова: Раффи Саркисян, папье-маше, национальная тематика, Гевонд Алишан, хачкар, Мария Якобсен, петроглифы эпохи неолита.

PAPIER-MÂCHÉ ARTWORKS IN THE ART OF RAFFY SARKISSIAN

SHUSHANIK ZOHRABYAN

Raffy Sarkissian enjoys wide popularity and recognition and holds his deserved place in the history of modern French art. R. Sarkissian's creative style took shape in the European artistic school. Nonetheless, he was able to revive his own national artistic traditions, develop and confirm his own perceptions – as his main accomplishment in the European aesthetic and artistic thinking.

Key words: Raffy Sarkissian, papier-mâché, national themes, Ghevond Alishan, khachkar, Maria Jacobsen, neolithic petroglyphs.